

ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց: Երկարատև հիվանդությունից հետո կյանքից հանացավ մաշտոցյան Մատենադարանի հնագույն աշխատակից, Մատենադարանի մատենագիտության և մանրանկարչության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ասատուր Մնացականյանը:



Աս. Մնացականյանը մեծատաղանդ և վաստակաշատ հայագետ էր՝ օժտված հայրենասերի նվիրական ոգով, բանասերի համապարփակ ընդունակություններով և նաև՝ բանաստեղծի թրթռուցիկ սրտով, որն իր քնքշական դրոշմն էր թողնում նրա գիտական խորիմաստ գրեթե բոլոր գործերի վրա: Նա փայլուն ներկայացուցիչն էր այն դպրոցի, որի անունը դասական հայագիտությունն է:

Ավելի քան քառասուն տարի Աս. Մնացականյանը բեղմնավոր գործունեություն ծավալեց հայագիտության բնագավառում՝ ստեղծելով տասնյակ ու տասնյակ մնայուն գործեր: 1940 թվականին ոտք դնելով Մատենադարան, նա, մանկավարժության և գյուղատնտեսության ասպարեզներում թողած համեստ վաստակից հետո, այնուհետև իր կյանքը կապեց մեր նշանավոր այդ գիտական օջախի հետ: Այդ ժամանակ թեև երիտասարդ, բայց արդեն ճանաչված մտավորական էր նա՝ բանաստեղծական ժողովածուների հեղինակ Ասատուր Շեմսը: Իր հասակակիցներից շատերի նման Մեծ հայրենականի տարիներին նա ևս գրիչը փոխարինեց զենքով և պատերազմի ավարտից հետո 1945 թ. կրկին վերադարձավ հարազատ Մատենադարան:

Տասնամյակներ շարունակ Աս. Մնացականյանը աշխատեց հայկական ձեռագրերի հեքիա-խալին աշխարհում, աշխատեց անզուգական արգասաքերությամբ՝ ստեղծելով մնայուն շատ գործեր միջնադարյան հայ գրականության, արվեստի, պատմագիտության, մատենագիտության և այլ ուղղություններով: Գիտական քննադատիկայի նման լայնահուն ընդգրկումը միայն եղակիներին է վիճակված, և Աս. Մնացականյանը այդ եզակիների շարքումն էր՝ մանավանդ իր կատարած գործերի խորությամբ և գիտական համարձակ նորարարությամբ: Միայն հայ միջնադարյան գրականության գեղով նրա կատարածն էլ բավական էր նրան գիտնականի մեծ համբավ ու համարում բերելու համար: «Նաղաշ Հովնաթան», «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», «Պատասար Դայիր», «Գրիգոր Տղա», «Հայ միջնադարյան հանելուկներ» և անտիպ ու տպագիր շատ այլ գործեր Աս. Մնացականյանի խորաթափանց մտքի և բողբոջված աշխատանքի առհավատյան են, միաժամանակ դրանցից յուրաքանչյուրը ծանրակշիռ ներդրում է միջնադարյան հայ պոեզիայի ուսումնասիրության բնագավառում:

Մեր ժողովրդի ըզմագարյան մշակույթի հետազոտման ասպարեզում, հիբավի, նշանակալից երևույթ էր Աս. Մնացականյանի կազմած «Հայ միջնադարյան ժողովրդական երգեր» գիրքը (1956)՝ իր պարունակած գուսանական և ժողովրդական երգերով, կազմողի բովանդակալից ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով: Աս. Մնացականյանը առաջինը բարձրագրեց և լուծեց ժողովրդական երգերը միջնադարյան գրավոր ժառանգությունից զատելու, չրանց ժամանակը որոշելու, սոցիալական միջավայրը բնութագրելու հարցերը:

Հայագիտության վերջին տասնամյակների ակնառու գործերից էր Աս. Մնացականյանի «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը մենագրությունը (1966), որը, նոր խոսք լինելով աղվանագիտության բնագավառում, բացահայտեց այսպես կոչված Հայկական Աղվանքի կամ Հայոց Արևելից կողմանց ճշմարիտ պատմությունը: Սույն մենագրությունը միաժամանակ ուղեցույց դարձավ այդ հարցերով զբաղվողների համար և վճարող դեր խաղաց որոշ վայ-պատմարանների միտումնավոր խեղաթյուրումները մերկացնելու գործում:

Պետք էր ունենալ Աս. Մնացականյանի բանասիրական տաղանդն ու գրականության պատմաբանի խորաթափանցությունը՝ լույս աշխարհ հանելու համար 12-րդ դարի գրեթե անտեսված մի այնպիսի բանաստեղծի ժառանգությունը, որպիսին Գրիգոր Տղան էր: Աս. Մնացականյանը ընդարձակ ուսումնասիրություններ, քննական քննադրերով և ծանոթագրություններով ընթերցողին ներկայացրեց միջնադարի այդ խոշոր բանաստեղծի շահաժող գեղարվեստական ժառանգությունը, լուսաբանեց նրա տեղն ու դերը միջնադարի հայ գրականության զարգացման մեջ և մասնավորապես նրա ազդեցությունը հետագայի այնպիսի հռչակավոր ստեղծագործողների վրա, որպիսին մեծն Չրիկն էր, Կ. Երզնկացին, և. Կեչառեցին և այլք:

Աս. Մնացականյանը շարունակ ընթանում էր գիտական նոր արահետներ բացելու կնճռոտ ու դժվարին ճանապարհով: Գիտական ինչ խնդրի էլ, որ ձեռք էլ զարկել Աս. Մնացականյանը, միշտ ասել է նոր ու թարմ խոսք, բորբոքել մտքեր, իր կատարածով լայն ասպարեզ բացել նորանոր հարցերի հետազոտման համար: Ասածը առավել ևս վերաբերում է «Հայկական զարգարվեստ» գրքին (1956), որն իր տեսակի մեջ կատարյալ մի նորություն էր գիտական աշխարհում առհասարակ: Աս. Մնացականյանը շունչնալով նախորինակը, առաջինը բացահայտեց դարդարվեստի գաղտնիքները, նրա զարգացման դիալեկտիկան՝ արվեստի այդ ճյուղի մեջ տեսնելով մարդու ստեղծագործ աշխարհայացքը, նրա ապրած վերընթաց ուղին՝ պրիմիտիվից դեպի կատարելություն:

Լայն էր ու ընդարձակ Աս. Մնացականյանի գիտական նախասիրությունների շրջանակը, և այն բոլորովին էլ չի սահմանափակվում նշված հարցերով: Հայ-ուրարտական առնչություններին, միջնադարյան Հայաստանի սոցիալական շարժումներին, հայրեններին, դիցաբանությունը, որմնաքանդակներին և այլ խնդիրների նվիրած նրա քննական հոդվածներն ու ուսումնասիրությունները շարունակ գտնվել են գիտական (և ոչ միայն գիտական) հասարակայնության ուշադրության կենտրոնում:

Ծվ այս բոլորի կողքին հայկական ձեռագրերի Մայր ցուցակի ստեղծման խնդիրը, որը շուրջ քառորդ դար դադար չէր տալիս նրան: Այդ գործի կուլտուր-պատմական և հայրենասիրական նշանակության բարձր գիտակցությամբ նա կարողացավ հաղթահարել ծանր խոչընդոտներ և իր իսկ մշակած սկզբունքներով առաջ տանել 20 հատորանոց Մայր ցուցակի ստեղծման աշխատանքները: Ավա՛ղ, նրան չվիճակվեց տեսնելու ցուցակի գոնե անդրանիկ հատորը, որը սպազորության է հանձնված իր իսկ առաջաբան-ուսումնասիրությամբ:

Աս. Մնացականյանը սպրեց գիտական մեծ ու բեղմնավոր կյանք, ճաշակեց տառապանքներ ու տրեմբլ, մաքառեց մահվան դեմ, բայց միշտ մնաց հույով արի ու աներեր, իր նախասիրած գործի նվիրյալ ծառա, և նրա ստեղծած գիտական վիթխարի վաստակը, որը հայագիտության պատկառազգու նվաճումներից է, դրա անուրանալի վկայությունն է:

Մեծատաղանդ հայագետի, հրաշալի և ազնիվ մարդու կորուստը ընդունելով սրտի խոր կսկիծով, այսօր միաժամանակ մխիթարվում ենք Աս. Մնացականյանի ապրած իմաստալից յոթ տասնամյակով և գիտական բազմաբեղուն այն վաստակով, որը շնորհակալ սերունդների սրտերում միշտ կմնա որպես հավերժական մի կոթող նրա բարի հիշատակին:

ՎԱՐԴԵՍ ՄԻՔԱՅԷԼՅԱՆ

Պատմական գիտությունների ինստիտուտ